ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«8» «դեկտեմբեր» 2023թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի պետ՝ Սարգիս Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի գլխավոր ճարտարագետ՝ Սարգիս Հովհաննիսյան

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հատուկ համակարգերի բաժնի գլխավոր ճարտարագետ՝ Աիդա Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով իրականացվող գնման գործընթացի շրջանակներում գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից էր ճանաչվել «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ն: Սույն թվականի նոյեմբերի 30-ին «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագրի նախագիծը: «Սաթինե Սուքիասյան» ԱՁ -ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները և ստորագրված պայմանագիրը չի կցել համակարգ:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից.
- «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով գնման ընթացակարգը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի /պայմանագիր չի կնքվում/ համաձայն.
- հաստատել գնման ընթացակարգը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել.
- հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) պարբերությունը առաջարկել «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝ Սարգիս Գրիգորյան

Անդամ՝ Սարգիս Հովհաննիսյան

Քարտուղար՝ Սոնա Շիրինյան